Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ

Հայաստանի Հանրապետությունում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների իրավունքների և պարտականությունների մասին

Վանաձոր
2013

Գրքույկը կազմեցին՝

Անահիտ Չիլինգարյան
Արմինե Սադիկյան

Խմբագիր՝

Արթուր Սաքունց

Սույն գրքույկի նպատակն է իրազեկել ՀՀ զինապարտ քաղաքացիներին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Գրքույկը կարող է օգտակար լիներ մասնավորապես նախազորակոչային և զորակոչային տարիքի ՀՀ քաղաքացիների, իրենց ծնողների և հարազատների, ներկայացուցիչների, զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների, իրենց ծնողների և հարազատների, ինչպես նաև իրավաբանների և իրավունքի այս բնագավառով հետաքրքվող այլ անձանց համար:

Գրքույկը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից ԵԱՀԿ/ԺՄԻՀԳ ֆինանսական աջակցությամբ: Սույն գրքույկում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են եւ հնարավոր է, որ չհամապատասխանեն ԵԱՀԿ/ԺՄԻՀԳ տեսակետներին:

Գրքույկը հրատարակվել է 2013 թ-ին, վերախմբագրվել՝ 2014 և 2015 թվականներին:

Բովանդակություն

1. Նախազորակոչիկների իրավունքները և պարտականությունները զինվորական հաշվառման (կցագրման) ընթացքում……...5

2. Զորակոչիկների իրավունքները և պարտականությունները զորկոչի ընթացքում……11

3. Զինծառայողների իրավունքները և պարտականությունները զինծառայության ընթացքում……22

4. Տեղեկատվություն սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների համար……39

Հավելված Ա Զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման մեխանիզմները……43

Հավելված Բ Դիմումների օրինակելի ձևեր……55

Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը

ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդված

1. Նախազորակոչիկների իրավունքները և պարտականությունները զինվորական հաշվառման (կցագրման) ընթացքում

Եթե Դուք 16 տարեկան եք՝ *Դուք ենթակա եք կցագրման.*

Կցագրումը 16 տարեկանը լրացած արական սեռի քաղաքացիների (նախազորակոչիկների) հաշվառումն է:

Կցագրումը կատարվում է Զինվորական կոմիսարիատների հանձնաժողովների կողմից ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին: Արտասահմանում բնակվող (մեկ ամսից ավելի) զինապարտների զինվորական հաշվառումը կատարում են այդ երկրում գտնվող ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական մարմինները:

Զինապարտների կցագրման հանձնաժողովը ստեղծվում է համապատասխան մարզպետի որոշմամբ մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը: Հանձնաժողովի ղեկավարն է հանդիսանում համապատասխան զինվորական կոմիսարը, հանձնաժողովում ընդգրկվում են նաև բժիշկ-փորձագետներ:

Ձեզ հաշվառման վերցրած լինելու վերաբերյալ փաստաթուղթը Ձեզ տրամադրված զինապարտի կցագրման վկայականն է[1]:

[1] «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի N 282 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 27 մայիսի 2010 թ. ՀՀ կառավարության թիվ 657-Ն որոշում:

Դուք պարտավոր եք՝

1. ներկայանալ Ձեր հաշվառման (եթե չունեք հաշվառում՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ[2]:
2. հաշվառման (եթե չունեք հաշվառում՝ փաստացի բնակության) վայրը փոխելու դեպքում զինվորական հաշվառման կանգնելու համար ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ՝ հաշվառման (եթե չունեք հաշվառում՝ փաստացի բնակության) նոր վայր ժամանելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում[3]:
3. Հանդիսանալով զինվորական ծառայության ընթացքում դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրած անձ պատժի կրումից ազատվելու պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ[4]:
4. Ձեր առողջական վիճակի, ընտանեկան դրության, հաշվառման (եթե չունեք հաշվառում՝ փաստացի բնակության) վայրի, կրթության, աշխատավայրի և պաշտոնի փոփոխությունների մասին յոթնօրյա ժամկետում հայտնել հաշվառման (եթե չունեք հաշվառում՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ (դիվանագիտական, հյուպատոսական մարմիններ)[5]:

---

[2] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս
[3] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մաս
[4] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերություն
[5] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մաս

Դուք իրավունք ունեք[6]՝

1. **պահանջել,** որպեսզի հարգվի և պաշտպանվի Ձեր արժանապատվությունը, այսինքն՝ Ձեզ չդիմեն անհարգալից կերպով, չվիրավորեն և այլն[7]:
2. **զերծ մնալ** ցանկացած տեսակի խտրական դրսևորումներից՝ կապված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից[8]:
3. **ծանուցված լինել** զինվորական կոմիսարիատ կանչվելու մասին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ կազմակերպական-իրավական ձևից գործատու կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձանց կողմից[9]:

Օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնում հաշվառված լինելու դեպքում հանրապետական զինկոմիսարիատ ներկայանալու մասին ծանուցագիրը Ձեզ հանձնվում է դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնի կողմից՝ ստորագրությամբ կամ էլեկտրոնային կապի միջոցով՝ համապատասխանաբար մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը և հոկտեմբերի 1-ը:

Յուրաքանչյուր դեպքում ծանուցագիրը պետք է կրի գրավոր փաստաթղթային տեսք, որը Դուք պետք է ստանաք **անձամբ**:

---

[6] Յուրաքանչյուր իրավունք նախատեսում է այդ իրավունքի կատարման պարտավորությունը համապատասխան մարմնի կողմից:

[7] ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդված

[8] ՀՀ Սահմանադրության 14.1–րդ հոդված

[9] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետ

4. **ազատվել** աշխատանքից, կամ արձակվել ուսումից՝ զինվորական կոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով[10]:

5. **բժշկական փորձաքննություն անցնել** Զինկոմիսարիատում, եթե տեղում հնարավոր չէ ստանալ բժշկական եզրակացություն, ուղեգիր ստանալ համապատասխան բժշկական հիմնարկում **առաջնահերթ և անվճար** կարգով հետազոտություն անցնելու համար[11]:

6. անհրաժեշտության դեպքում **անվճար և առաջնահերթ** կարգով բուժում ստանալ ուղեգրված բժշկական հիմնարկում[12]:

7. բժշկական փորձաքննություն անցնելուց հետո պահանջել, որպեսզի Ձեր օրինական ներկայացուցչին տրամադրվի պիտանիության մասին բժիշկ-փորձագետի **եզրակացության օրինակը**[13]:

8. մինչև հերթական զորակոչին նախորդող փետրվարի 1-ը կամ օգոստոսի 1-ը գրավոր դիմում ներկայացնել Ձեր հաշվառման տարածքային զինվորական կոմիսարիատ և հայտնելով այն մասին, որ Ձեր կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ռազմական զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը՝ Դուք կարող եք անցնել այլընտրանքային զինվորական ծառայության, կամ որ կրոնական դավանանքը կամ համոզմունքը հակասում է ընդհանրապես զինվորական ծառայության անցնելուն, ինչի դեպքում Դուք կարող եք անցնել այլընտրանքային աշխատանքային ծառայության[14]: Այլընտրանքային ծառայության մասին որոշումը կայացվում է Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի կողմից, որը կազմվում է տարածքային կառավարման, առողջապահության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, կրթության եւ գիտության, ոստիկանության եւ պաշտպանության բնագավառներում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների,

---

[10] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետ
[11] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված
[12] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված
[13] «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված
[14] «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված

ինչպես նաեւ ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից:

Եթե Դուք երկքաղաքացի եք՝

ապա Դուք ազատվում եք պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել եք այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել եք այլընտրանքային զինվորական ծառայություն՝ բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած պետությունների[15]:

Հանդիսանալով երկքաղաքացի՝ **չեք ազատվում** զորահավաքից և վարժական հավաքներից[16]:

Եթե Դուք այլ պետության քաղաքացի եք՝

Եթե Դուք հանդիսանում եք ՀՀ քաղաքացի, ընդունելով այլ պետության քաղաքացիություն՝ **չեք ազատվում** պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել եք այլ պետությունում, թե ոչ:

---

[15] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3^1-րդ հոդվածի 1-ին մաս

[16] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3^1-րդ հոդվածի 3-րդ մաս

ՀՀ քաղաքացիություն կորցնելը.

18 տարեկանը լրանալուց հետո Դուք իրավունք ունեք փոխել Ձեր ՀՀ քաղաքացիությունը, միայն այն դեպքում եթե չունեք ՀՀ հանդեպ պարտավորություն[17]: Այդ պարտավորություններից մեկն է հանդիսանում ՀՀ պաշտպանությանը մասնակցելը (պարտադիր զինվորական ծառայություն անցնելը):

Միչև 18 տարեկանը լրանալը դուք կարող եք կորցնել ՀՀ քաղաքացիությունը, եթե ձեր ծնողներից մեկը կամ երկուսը կորցրել են ՀՀ քաղաքացիությունը: Այս դեպքում 14-18 տարեկանում կարող եք կորցնել Ձեր ՀՀ քաղաքացիությունը միայն այն դեպքում, եթե չունեք պետության հանդեպ չկատարված՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտավորություններ (պարտադիր զինվորական ծառայություն անցնելը)[18]:

[17] «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված
[18] «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված

2. Զորակոչիկների իրավունքները և պարտականությունները զորկոչի ընթացքում

Եթե Դուք 18 տարեկան եք, ապա Դուք ենթակա եք **զորակոչման:**

Դուք պարտավոր եք.

1. Ծանուցագրում նշված ժամկետում **ներկայանալ** այն զինվորական կոմիսարիատ, որտեղ հաշվառված եք:

Դուք իրավունք ունեք.

1. **պահանջել,** որպեսզի հարգվի և պաշտպանվի Ձեր արժանապատվությունը, այսինքն, Ձեզ չդիմեն անհարգալից կերպով, չվիրավորեն և այլն[19]:
2. զերծ մնալ ցանկացած տեսակի **խտրական դրսևորումներից**, կապված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից[20]:
3. **ծանուցված լինել** զինվորական կոմիսարիատ կանչվելու մասին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ

[19] ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդված
[20] ՀՀ Սահմանադրության 14.1–րդ հոդված

կազմակերպական-իրավական ձևից գործատու կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձանց կողմից[21]: Յուրաքանչյուր դեպքում ծանուցագիրը պետք է կրի գրավոր փաստաթղթային տեսք, որը Դուք պետք է ստանաք **անձամբ**:

4. **ազատվել** աշխատանքից, կամ **արձակվել** ուսումից՝ զինվորական կոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով[22]:

5. **բժշկական փորձաքննություն անցնել** զինկոմիսարիատում, եթե տեղում հնարավոր չէ ստանալ բժշկական եզրակացություն, ուղեգիր ստանալ համապատասխան բժշկական հիմնարկում **առաջնահերթ և անվճար** կարգով հետազոտություն անցնելու համար[23]:

6. անհրաժեշտության դեպքում **անվճար և առաջնահերթ** կարգով բուժում ստանալ ուղեգրված բժշկական հիմնարկում[24]:

7. պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

8. պարտադիր զինվորական ծառայությունից ստանալ տարկետում օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

9. բժշկական փորձաքննություն անցնելուց հետո պահանջել, որպեսզի Ձեզ տրամադրվի պիտանիության մասին բժիշկ-փորձագետի **եզրակացության օրինակը**[25]:

10. պահանջել, որպեսզի Ձեզ տրամադրվի տեղական, մարզային կամ Հանրապետական զորակոչային հանձնաժողովների կողմից Ձեր վերաբերյալ կայացրած **որոշումների օրինակները**[26]:

11. **բողոքարկել** տեղական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի որոշումները Հանրապետական

---

[21] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետ
[22] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետ
[23] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված
[24] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված
[25] «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված
[26] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված

զորակոչային հանձնաժողով, իսկ Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումները՝ դատարան մեկամսյա ժամկետում[27]:

Պարտադիր զինվորական ծառայությունից կարող եք ազատվել, եթե

ա) Հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից **առողջական վիճակի պատճառով** ճանաչվել եք զինծառայության համար ոչ պիտանի՝ հանվելով զինվորական հաշվառումից, կամ խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի՝ հաշվառվելով պահեստազորում

բ) **Ձեր հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել) է** ՀՀ պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ[28] կատարելու ժամանակ, և այդ ընտանիքի միակ արու զավակը Դուք եք

---

[27] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, 3-րդ մասի երրորդ պարբերություն

[28] Զինվորական պարտականություններ են համարվում՝ մարտական գործողություններին մասնակցելը, պաշտոնեական պարտականությունների, մարտական հերթապահության կատարումը, զորավարժություններին մասնակցելը, աշխատակարգով սահմանված ծառայության ժամանակամիջոցում զորամասի տարածքում կամ, եթե դա թելադրված է ծառայության անհրաժեշտությամբ, ծառայողական գործուղման կամ բուժման մեջ գտնվելը, ծառայության վայր, բուժման մեկնելը կամ վերադառնալը, զինվորական հավաքներին մասնակցելը, գերության մեջ (բացառությամբ կամավոր գերի հանձնվելու դեպքերը), պատանդի կամ ներկալվածի վիճակում գտնվելը, անհայտ բացակայությունը՝ մինչև զինծառայողին օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչելը կամ մեռած հայտարարելը, անհատի կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը, օրինականության և իրավակարգի ապահովման գործում իրավապահ մարմիններին օգնություն ցույց տալը, զինծառայողների այլ գործողություններ, որոնք դատարանի կողմից ճանաչվել են որպես հասարակության ու պետության շահերից բխող: («ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի երկրորդ պարբ.)

գ) մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելն **օտարերկրյա պետությունների զինված ուժերում անցել եք պարտադիր զինվորական ծառայություն**

դ) **ունեք գիտական աստիճան** (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) և զբաղվում եք մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ:

ե) **ՀՀ կառավարության որոշմամբ:** Այն դեպքում եթե առկա չէ զինվորական ծառայությունից ազատվելու համար անհրաժեշտ վերը նշված հիմքերից մեկը, սակայն առկա են այնպիսի պայմաններ, որոնք խոչընդոտում են, կարող են խոչընդոտել զինվորական ծառայությանը, կամ Ձեր կողմից զինվորական ծառայության մեկնելը կարող է անբարենպաստ պայմաններ ստեղծել Ձեր և Ձեր հարազատների համար՝ իրավունք ունեք դիմել ՀՀ կառավարություն պարտադիր զինվորական ծառայությունից ազատվեու վերաբերյալ անհատական որոշում կայացնելու համար**:**

Պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կարող եք ստանալ

1. ընտանեկան դրության բերումով[29]
2. ուսումը շարունակելու համար[30]
3. առողջական վիճակի պատճառով[31]
4. ՀՀ Ազգային ժողովի **պատգամավոր հանդիսանալու դեպքում**, լիազորությունների ողջ ժամկետում:

Առանձին դեպքերում կառավարությունը որոշում է **քաղաքացիների** կատեգորիաները[32] և առանձին քաղաքացիներին, որոնց տրվում է տարկետում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից:

[29] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված
[30] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված
[31] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված

Ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է, եթե

ա) դուք ունեք անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն ՀՀ քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ[33]:

բ) առանց մոր մեծացող երեխա.

գ) երկու և ավելի երեխա.

դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին.

ե) Դուք ունեք մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ:

զ) Ձեր կինը հղի է երկրորդ երեխայով կամ զույգ երեխայով /առնվազն վերցամսյա հղիության դեպքում/

---

[33] Ըստ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասին ա) կետի՝ անաշխատունակ ծնողներ են՝

- ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը,
- առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը,
- դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը.

Ուշադրություն՝

Եթե դուք որդեգրված եք.

Դուք օգտվում եք վերը նշված հիմքերով տարկետում ստանալու իրավունքից, եթե Դուք մինչև զորակոչային տարիքի հասնելը **եղել եք որդեգրված** առնվազն 5 տարի:

Եթե Ձեր ծնողները ամուսնալուծված են.

Դուք օգտվում եք վերը նշված հիմքերով տարկետում ստանալու իրավունքից, եթե Ձեր **ծնողները ամուսնալուծվել են** առնվազն 5 տարի առաջ մինչև Ձեր զորակոչային տարիքի հասնելը:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքով չնախատեսված **առանձին դեպքերում** ընտանեկան դրության բերումով տարկետում տալու մասին որոշումն ընդունում է ՀՀ **պաշտպանության նախարարը**՝ հանրապետական զորակոչային հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում:

Ընտանեկան դրության բերումով տարկետումը տրվում է **մինչև Ձեր 27 տարեկան** դառնալը:

Եթե մինչև 27 տարեկան դառնալը Դուք չեք կորցնում տարկետում ստանալու իրավունքը, ապա խաղաղ ժամանակ ազատվում եք պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվում պահեստազորում:

Ուսումը շարունակելու համար տարկետում տրվում է, եթե Դուք

ա) **պետական բարձրագույն ուսումնական հաստատության** (այդ թվում՝ օրդինատուրա, ինտերնատուրա և մագիստրատուրա) **ցերեկային ուսուցման**, ինչպես նաև ՀՀ կառավարության հաստատած ցանկում ընդգրկված **միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման** ուսանող եք[34],

բ) պետական գիտակրթական համակարգի **ասպիրանտուրայում** պետական պատվերով առկա ուսուցմամբ սովորող եք,

գ) պետական պատվերով, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանող եք, օրդինատուրայում, ինտերնատուրայում, մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորող եք՝ ՀՀ կառավարության սահմանած դեպքերում և կարգով[35]:

Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտա կրթական հաստատություններընդունված ՀՀ քաղաքացիները կամ նրանց օրինական ներկայացուցիչները պարտավոր են ՀՀ կրթության ևգիտությա ն նախարարության հետ կնքել սահմանված ձևի գրավի պայմանագիր: Գր ավ դրվող գույքինվազագույն գինը սահմանվում է 8,5 մլն դրամ:

---

[34] ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում է պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության, ներառյալ զինվորական ծառայությունից տարկետման և առանց տարկետման իրավունքով տեղերը: Տես՝ 2013 թ. ապրիլի 4-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների 2013/2014 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձեվով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) եվ ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 398-Ն որոշումը:

35

Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատ ություններ ընդունված հայաստանիհանրապետության քաղաքացիներին պարտադիր զինվո րական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը հաստատելումասին»
29 օգոստոսի 2002 թվականի ՀՀ կառավարության N 1394-Ն որոշում:

Եթե դուք ընդունվել եք օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակր թականհաստատություն, ապա դուք կարող եք դիմել շարքային կամ պահեստազորի սպայական կազմերի պարտադիրզ ինվորական ծառայության համապատասխան զորակոչից տարկետում ս տանալու համար ՀՀ կրթության նգիտության նախարարություն՝

1) բակալավրիատի կրթական ծրագրերով ընդունվելու դեպքում՝ հայտ արարված պարտադիր զինվորականծառայության գարնանային և աշն անային զորակոչից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ[36]
2) մագիստրատուրայի կամ հետբուհական կրթական ծրագրերով ընդո ւնվելու դեպքում՝ մինչևհայտարարված պարտադիր զինվորական ծառ այության զորակոչի ավարտը:

Եթե պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական կամ պահեստազորի սպայական կազմի զորակոչից խուսափելու հիմքով ձեր նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, ապա տվյալ պարագայում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու համար ներկայացված դիմումները ենթակա են մերժման: Տարկետում ստանալու վերաբերյալ ընդունվում է ՀՀ կառավարության անհատական որոշում:

դ) **դատական դպրոցի** ունկնդիր եք,

ե) **հանրակրթական**, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (**արհեստագործական**) կրթական ծրագրերով սովորող եք՝ մինչև Ձեր 19 տարին լրանալը, եթե համապատասխան զինվորական կոմիսարիատ եք ներկայացնում ուսումնական հաստատության պաշտոնատար անձի տված տեղեկանք՝ տվյալ ուսումնական հաստատությունում ուսումնառության վերաբերյալ:

[36] Ծանոթագրություն՝ կարելի է ենթադրել, որ հերթական զորակոչից ոչ ուշ քան մեկ ամիս առաջ:

Ուշադրություն՝

1. Եթե Դուք **պաշտպանել եք ատենախոսությունը**, բայց ՀՀ կրթության և գիտության նախարարության ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատումը դեռ չեք ստացել, ապա պարտադիր զինվորական ծառայության եք զորակոչվում ատենախոսության պաշտպանության օրվանից 2 ամիս հետո:

Եթե Ձեր ատենախոսության **պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված է**, Դուք պարտադիր զինվորական ծառայության եք զորակոչվում հայտարարված զորակոչի ընթացքում:

Դուք կորցնում եք տարկետման իրավունքը.

Եթե Դուք տարկետում եք ստացել ուսումը շարունակելու համար, սակայն **հեռացվել կամ ազատվել եք ուսումնական հաստատությունից**, կամ անբավարար առաջադիմության համար **մնացել եք նույն կուրսում** և Ձեր 18 տարին լրացել է, եթե չեք օգտվում այլ հիմքով տարկետում ստանալու իրավունքից: **Բացառություն** են կազմում այն դեպքերը, երբ հեռացվել եք ուսումնական հաստատությունից **ուսման վարձը չվճարելու պատճառով** և մինչև պարտադիր զինվորական ծառայության զորակոչի հայտարարվելն ուսման վարձի վճարելու հիման վրա ուսումնառությունը վերականգնվել է:

Եթե Դուք տարկետում եք ստացել կրթությունը շարունակելու համար, ապա Դուք կարող եք զինվորական ծառայության կանչվել **մինչև 27** տարեկան դառնալը:

Սակայն՝

Եթե դուք հանդիսանում եք պետական պատվերով **պետական գիտակրթական համակարգի, միջպետական** և **միջգերատեսչական**

համաձայնագրերով **օտարերկրյա պետությունների կամ ասպիրանտուրայում սովորող**, կամ **դատական դպրոցի ունկնդիր**, ապա Ձեզ տարկետումը տրվում է մինչև ուսման ավարտը: Տվյալ դեպքում, եթե Դուք ուսումը ավարտում եք 27-ից բարձր տարիքում, ապա պարտադիր զինվորական ծառայության եք կանչվում ասպիրանտուրան կամ դատական դպրոցն ավարտելուն հաջորդող զորակոչի ընթացքում:

Առողջական վիճակի պատճառով տարկետումը տրվում է, եթե Դուք

ա) առողջական վիճակի պատճառով ունեք **բուժման կարիք**

Տարկետում տրվում է՝

ա. 3 անգամ, յուրաքանչյուր անգամ **մինչև մեկ տարի** ժամկետով,

բ. 1 անգամ մինչև վեց ամիս ժամկետով, եթե հանդիսանում եք **ասպիրանտուրայում** կամ **դատական դպրոցում** սովորելու կապակցությամբ տարկետում ստացած անձ և ուսումը ավարտել եք 27-ից բարձր տարիքում:

Երրորդ անգամ, իսկ բ) կետում նշված դեպքում առաջին անգամ տարկետման ժամկետը լրանալուց հետո կամ ճանաչվում եք պիտանի զինվորական ծառայության համար, կամ ճանաչվում եք խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում է պահեստազորում, կամ ճանաչվում եք զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում եք զինվորական հաշվառումից («Զինապարտության մասին» ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս, 2-րդ մաս):

բ) առողջական վիճակի պատճառով ճանաչվել եք **ժամանակավորապես ոչ պիտանի:**

Առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելիս ստանում եք տարկետում՝

ա. 1 անգամ երեք տարի ժամանակով

բ. 1 անգամ մինչև մեկ տարի ժամկետով, եթե Դուք ասպիրանտուրայում կամ դատական դպրոցում սովորելու կապակցությամբ տարկետում ստացած անձ եք և ուսումը ավարտել եք 27-ից բարձր տարիքում:

Տարկետման ժամկետը լրանալուց հետո, ինչպես և առաջին կետում նշված դեպքում, նորից ենթարկվելով բժշկական հետազոտության, կամ ճանաչվում եք պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում զինվորական ծառայության կամ ճանաչվում եք խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստազորում, կամ ճանաչվում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից[37]:

Որոշումն ընդունվում է Հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

[37] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մաս

3. Զինծառայողների իրավունքները և պարտականությունները զինծառայության ընթացքում

ՀՀ զինվորական ծառայությունն իրականացվում է օրինականության, զինծառայողների իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության, միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման, կոլեգիալ կառավարման սկզբունքներով:

«Զինվորական ծառայության մասին»
ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս

Եթե Դուք ճանաչվել եք

- պիտանի շարային ծառայության համար
- պիտանի շարային ծառայության համար՝ սահմանափակումներով

Դուք իրավունք ունեք.

1. **որոշակի պայմանների դեպքում օգտվել բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնությունից**[38]

[38] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մաս

2. **հայտարարված զորակոչի ընթացքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող Ձեր եղբոր հետ, ձեր ցանկությամբ՝ ծառայության զորակոչվել միևնույն զորամաս[39]:**

Դուք իրավունք ունեք օգտվելու բնակության վայրին մոտ գտնվող զորամասում[40] ծառայելու արտոնությունից, եթե՝

ա) հանդիսանում եք միայնակ և տարիքային կենսաթոշակի անցած կամ երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակը.

բ) ունեք ՀՀ սահմանների պաշտպանության, զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ-ում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր).

գ) ամուսնացած եք և ունեք մեկ երեխա.

դ) երկկողմանի ծնողազուրկ եք.

ե) միակողմանի ծնողազուրկ եք և չունեք չափահաս քույր կամ եղբայր.

զ) դիմել եք ՀՀ պաշտպանության նախարարին և Ձեզ անհատապես տրվել է տվյալ արտոնությունը:

Եթե Դուք զորակոչվել եք ՀՀ զինված ուժեր, ապա անցնում եք զինվորական ծառայության

[39] «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մաս

[40] Բնակության վայրին մոտ գտնվող զորամաս է համարվում զորակոչիկի հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրից մինչև 150 կմ տեղակայված զորամասը:

Զինվորական ծառայությունը

զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության հատուկ տեսակ է

ժամկետային զինվորական ծառայություն

պահեստազորային զինվորական ծառայությունից

<u>պայմանագրային զինվորական ծառայություն</u>

- զինված ուժերում և այլ զորքերում կամավոր հիմունքներով զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ կամ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած) և կանանց զինվորական ծառայությունը

<u>պարտադիր զինվորական ծառայություն</u>

- զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված շարքային (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողների) ու սպայական կազմերի, ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների զինվորական ծառայությունը՝

24 ամիս շարային կազմի համար
2-3 տարի առաջին խմբի պահեստազորի սպաների համար

!!! Կարող է փոխարինվել այլընտրանքային ծառայությամբ

Այլընտրանքային ծառայություն

Այլընտրանքային **զինվորական** ծառայություն

կարող է անցնել ՀՀ այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ **համոզմունքներին հակասում են միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը**:

Այլընտրանքային **աշխատանքային** ծառայություն

կարող է անցնել ՀՀ այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ **համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը**:

Զինվորական ծառայության սկիզբ է համարվում.

զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների համար՝ ծառայության վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը[41]:

Զինվորական ծառայությունն ավարտված է համարվում.

զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու կապակցությամբ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օրը[42]:

[41] «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ

[42] «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետ

Զինվորական ծառայության ժամկետը հաշվարկելու կարգը.

Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ ժամկետային զինծառայության ամբողջ ժամանակաշրջանը՝ անկախ ընդհատումներից: Ժամկետը որոշվում է **օրացուցային** հաշվարկով[43]:

Զինծառայողի զինվորական ծառայության ժամկետում չեն հաշվարկվում՝

1) ազատազրկման կամ կալանքի կամ կարգապահական զումարտակում պահելու ձևով պատիժը կրելու ժամանակահատվածը

2) ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամանակահատվածը

3) զորամասը և ծառայության վայրն ինքնագլուխ թողնելու կամ օրենքով սահմանված կարգով ապացուցված ինքնախեղման կամ դիտավորությամբ իր առողջական վիճակն այլ եղանակով վատթարացրած զինծառայողի բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածը՝ անկախ պատճառներից

4) ռազմաուսումնական հաստատություններից անկարգապահության կամ անբավարար առաջադիմության կամ ուսումնառությունից հրաժարվելու համար հեռացված պարտադիր զինծառայողների (կուրսանտների) ուսման ժամանակահատվածը՝ պարտադիր զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում:

Պարտադիր զինծառայության սահմանված ժամկետը լրացվում է բաց թողնված օրացուցային օրերի քանակով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով՝ հաշվի առնելով նաև դատարանի կամ ՀՀ

[43] «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված

զինվորական դատախազության կամ պետական լիազոր մարմնի քննչական ծառայության առաջարկությունը:

Որպես զինծառայող Դուք պարտավոր եք[44]՝

1. հավատարիմ լինել զինվորական երդմանը, խստորեն պահպանել ՀՀ Սահմանադրության և օրենքների պահանջները.
2. ձեր զինվորական պարտքը և գործառնական պարտականությունները, օրվա կարգացուցակով նախատեսված միջոցառումները կատարել լիարժեք, բարեխղճորեն և արիաբար, պատշաճ ձևով ուսումնասիրել ռազմական գործը, պահպանել ռազմական և պետական գույքը.
3. աննկուն կրել զինվորական ծառայության դժվարությունները, անմնացորդ նվիրվել զինվորական պարտքի կատարմանը.
4. լինել զգոն, խստորեն պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը.
5. պահպանել զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերությունները, ամրապնդել զորային ընկերականությունը.
6. հարգել հրամանատարներին (պետերին) ու միմյանց, պահպանել զինվորական բարեկրթության և ողջույնի կանոնները.
7. թույլ չտալ զինծառայողի պատիվն արատավորող արարք:
8. հավատարիմ լինել զինվորական երդմանը, անձնուրաց կերպով ծառայել իր ժողովրդին, արիաբար, հմտորեն, չխնայելով սեփական արյունը և նույնիսկ կյանքը, պաշտպանել Հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը, կատարել զինվորական պարտքը, անսասան տանել զինվորական ծառայության դժվարությունները.

---

[44] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 5-րդ հոդված «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված

9. խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, կատարել զինվորական կանոնադրությունների պահանջները.

10. մշտապես տիրապետել ռազմական մասնագիտական գիտելիքներին, կատարելագործել սեփական իմացությունը և զինվորական վարպետությունը.

11. իմանալ և գործադրման համար մշտապես պատրաստ պահել իրեն հանձնված սպառազինությունը և մարտական տեխնիկան, պահպանել պետական և ռազմական ունեցվածքը.

12. լինել ազնիվ, կարգապահ և խիզախ զինվորական պարտքի կատարման ժամանակ, ցուցաբերել խելամիտ նախաձեռնություն.

13. անվերապահորեն ենթարկվել հրամանատարներին (պետերին) և նրանց պաշտպանել մարտի ժամանակ, պաշտպանել զորամասի մարտական դրոշը.

14. բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, չխնայելով կյանքը՝ ընկերներին փրկել վտանգից, նրանց օգնել խոսքով ու գործով, հարգել նրանցից յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, իր և ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, նրանց հեռու պահել անարժան արարքներից.

15. պահպանել զինվորական հարգանքի, վարքի և զինվորական ողջույնի կանոնները, մշտապես լինել համազգեստով՝ մաքուր և խնամքով հագնված.

16. լինել աչալուրջ, խստորեն պահպանել պետական և ռազմական գաղտնիքը:

Որպես զինծառայող Դուք իրավունք ունեք.

1. ստանալ պարտադիր զինվորական ծառայության ընթացքում տրվող **հիմնական, լրացուցիչ, հիվանդության արձակուրդ,** ինչպես նաև հերթական (հիմնական), լրացուցիչ, հիվանդության և ռազմաուսումնական հաստատություններն ավարտելու կապակցությամբ արձակուրդ տալու դեպքում լրացուցիչ տրվող արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակ՝ մինչև 3 օր[45]:

Հերթական (հիմնական) արձակուրդը տրվում է[46]

- մեկ անգամ՝ **ոչ պակաս, քան 6 ամսվա օրացուցային ծառայության դեպքում**, զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից օրացուցային տարվա համար սահմանված արձակուրդների տրման ժամանակացույցի համաձայն[47]:

Հիմնական արձակուրդի տևողությունը՝

1) **շարքային** կազմի կոչում ունեցող զինծառայողներին՝ 10 օր,

2) **կրտսեր** ենթասպայական կազմի կոչում ունեցող զինծառայողներին՝ 15 օր,

3) **սպաներին**՝ յուրաքանչյուր լրիվ ծառայած ամսվա համար երկու և կես օր հաշվարկով:

---

[45] «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված

[46] «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մաս

[47] Արձակուրդների տրման ժամանակացույցը կազմելիս արձակուրդի տրման հերթականությունը որոշվում է՝ հաշվի առնելով զորամասի (զինվորական կառավարման մարմնի) մարտական պատրաստության ապահովման շահերը և զինծառայողի բարեխիղճ ծառայությունը:

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներին, զինվորական ծառայության ընթացքում, **որպես խրախուսանք** կարող է տրվել արձակուրդ, զինվորներին՝ 15 օր, սերժանտներին և ավագներին՝ 20 օր տևողությամբ:

Հերթական արձակուրդի ընթացքում հիվանդացած զինծառայողի **արձակուրդը երկարաձգվում է** հիվանդության պատճառով չօգտագործած օրերի թվով՝ հիմք ընդունելով բուժող բժշկի և բուժհիմնարկի պետի (գլխավոր բժշկի) համապատասխան տեղեկանքը[48]:

Լրացուցիչ արձակուրդը տրվում է[49]

1) հրամանատարի (պետի) որոշմամբ՝ մինչև 5 օր տևողությամբ՝
- զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշների համար,
- ելնելով ընտանեկան պայմաններից (ամուսնացածներին՝ 6 ամիսը 1 անգամ)

Հիվանդության արձակուրդը տրվում է[50]

Ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա **30-ից 60 օր** տևողությամբ:
Պարտադիր զինծառայողի հիվանդության արձակուրդը կարող է **երկարաձգվել** մինչև 60 օր:

Երկարաձգվելու դեպքում բուժման և հիվանդության պատճառով տրված արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակն ընդհանուր

[48] «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասի, երկրորդ պարբ.
[49] «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մաս
[50] «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդված

առմամբ չպետք է անցնի չորս ամսից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենսդրությամբ առանձին հիվանդությունների բուժման համար սահմանվում են ավելի երկարատև ժամկետներ կամ ժամկետը կարող է երկարաձգվել պետական լիազոր մարմնի ղեկավարի և նրա տեղակալների որոշմամբ՝ բժշկական հիմնարկի եզրակացության հիման վրա:

Եթե ավարտվում է բուժման կամ հիվանդության պատճառով տրված արձակուրդի անընդմեջ ժամկետը, ապա իրականացվում է ռազմաբժշկական հանձնաժողովի հետազոտման՝ զինվորական ծառայությանը պիտանիությունը որոշելու համար:

Հիվանդության պատճառով զինծառայողին արձակուրդ տրվում է ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Հիվանդության պատճառով արձակուրդը հերթական արձակուրդ չի հաշվարկվում, իսկ **առողջարանային բուժումը** կազմակերպվում է հերթական արձակուրդի ընթացքում:

2. օգտվել ժամկետը լրանալու պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում տրվող դրամական օգնությունից 10 հազար ՀՀ դրամի չափով, իսկ երկկողմանի ծնողազուրկ (որբ) զինծառայողների դեպքում՝ 200 հազար դրամի չափով:[51]

[51] «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին պարբերության 4-րդ կետ, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» 2000 թ. նոյեմբերի 27-ի ՀՀ կառավարության թիվ 778 որոշման 7-րդ մաս

3. օգտվել Ձեր և Ձեր ընտանիքի անդամների[52] համար անվճար որակյալ բժշկական օգնությունից և անվճար առողջարանային բուժման իրավունքից:

Բժշկական օգնությունը տրամադրվում է՝

- համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում
- անհետաձգելի դեպքերում ՀՀ տարածքում գործող բոլոր կարգի բժշկական հիմնարկներում՝ համապատասխան մարմինների միջոցների հաշվին

4. օգտվել ՀՀ տարածքում քաղաքային **ուղևորատար տրանսպորտի** բոլոր տեսակներից՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու իրավունքից[53]:

Փոխհատուցվում են արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս ընտանիքի՝ նրանց ուղեկցող անդամների քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակների, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից) ծախսերը հետևյալ չափերով՝

---

[52] Զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում՝

1) 18 տարին չլրացած երեխաները, անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակները, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը,

2) ծնողները, ամուսինը,

3) զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված, կամ մինչև 23 տարեկան ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև նրա խնամքի տակ գտնվող 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

[53] «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդված

- մինչև 30 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 600 դրամ,
- 30-60 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1000 դրամ,
- 60-100 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1200 դրամ,
- 100-150 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 2000 դրամ,
- 150-200 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 2400 դրամ,
- 200-250 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 3000 դրամ,
- 250-300 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 6000 դրամ,
- 300-350 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 8000 դրամ,
- 350 և ավելի կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 10000 դրամ:

Զինծառայողներին ուղեկցող ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին փոխհատուցում տրվում է նշված սահմանված գումարների 50 տոկոսի չափով[54]:

5. օգտվել **կրթություն ստանալու** երաշխիքներից[55]:

- սովորել ռազմաուսումնական հաստատություններում, իսկ սպաների ու ենթասպաների դեպքում՝ նաև մասնակցել վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներին
- ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու դեպքում, զոհված (մահացած) զինծառայողների երեխա հանդիսանալու դեպքում օգտվել պետական ուսումնական հաստատություններ ընդունելու հնարավորությունից՝ մրցույթից դուրս, պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով

[54] «ՀՀ տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելիս եվ արձակուրդից վերադառնալիս զինծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների՝ տրանսպորտից օգտվելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թ. մայիսի 6-ի թիվ 886 որոշում

[55] «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված

• պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու դեպքում՝ երեք տարվա ընթացքում, օգտվել պետական ուսումնական հաստատություններ ընդունվելու հնարավորությունից, մրցույթից դուրս պետական պատվերի շրջանակներում, ուսումնական հաստատություններին ՀՀ կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում:

6. օգտվել **հաշմանդամության զինվորական կենսաթոշակ** ստանալու իրավունքից:

Կենսաթոշակը նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված զինծառայողին, եթե նա հաշմանդամ է ճանաչվել.

ա) զինվորական ծառայության ընթացքում կամ

բ) զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սակայն զինծառայության ժամանակ ծագած հիվանդության, վնասվածքի կամ խեղման հետևանքով, կամ

գ) բ) կետում նշված ժամկետից ուշ, սակայն զինծառայության ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով[56]:

7. օգտվել զինծառայողների **պարտադիր պետական ապահովագրությունից**[57]:

Միանվագ պետական պարտադիր ապահովագրական գումար հատկացվում է.

• ՀՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների, ինչպես նաև մարտական հերթապահության և

[56] «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված

[57] «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված

հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհվելու (մահանալու) դեպքում՝ երկու միլիոն դրամի չափով:

• ծառայողական պարտականությունները կատարելիս զինծառայողների զոհվելու (մահանալու) դեպքում՝ մեկ միլիոն դրամի չափով:

• Այն զինծառայողներին, որոնք հաշմանդամ են դարձել.

ա) զինվորական ծառայության ընթացքում կամ

բ) զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սակայն զինծառայության ժամանակ ծագած հիվանդության, վնասվածքի կամ խեղման հետևանքով, կամ

գ) բ) կետում նշված ժամկետից ուշ, սակայն զինծառայության ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով:

Տվյալ դեպքում միանվագ պետական պարտադիր ապահովագրական գումար հատկացվում է՝ [58]

ա) I խմբի հաշմանամներին՝ 500 հազար դրամի չափով
բ) II խմբի հաշմանդամներին՝ 400 հազար դրամի չափով
գ) III խմբի հաշմանդամներին՝ 300 հազար դրամի չափով

Եթե զինծառայողի զոհվելը (մահանալը) կամ հաշմանդամ դառնալը նրա կողմից կատարված կանխամտածված օրինազանցության հետևանք է, ապա միանվագ պետական պարտադիր ապահովագրական գումարը չի վճարվում:

[58] «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» հայաստանի հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության 27 նոյեմբերի 2000 թվականի N 778 որոշում

8. **խրախուսվել** ծառայության մեջ աչքի ընկնելու և ծառայողական պարտականությունները ջանասիրաբար կատարելու, անձնական հատուկ վաստակի և դրական նախաձեռնություն ցուցաբերելու համար[59]:

9. եթե Ձեր նկատմամբ նշանակված է **ծառայողական քննություն**՝ ծառայողական քննության անցկացման ժամանակ ծանոթանալու Ձեր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերին և դրանց կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, ինչպես նաև մինչև ծառայողական քննության ավարտը ծանոթանալու ծառայողական քննության նյութերին, ներառյալ՝ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացությանը, թիվ 11 կետում նշված կարգով[60]:

10. ձեր կողմից Ձեր նկատմամբ կիրառված **կարգապահական տույժը բողոքարկելու ըստ վերադասության**՝ տույժի մասին Ձեզ հայտարարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում[61]:

11. **ներկայացնելու զեկուցագիր** զինվորական ծառայության անցման հետ կապված հարցերով Ձեր անմիջական հրամանատարին (պետին), զինծառայողին տրվող բանավոր կամ գրավոր հրամանների կամ ցուցումների հրամաններ կամ ցուցումներ տվողի կամ դրանք կատարողի լիազորությունների սահմանների վերազանցման դեպքերում, ինչպես նաև Ձեր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը բողոքարկելու կամ այլ զինծառայողների կողմից անօրինական ու անարդար գործողություններ կատարելու մասին վերադաս հրամանատարներին

[59] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 7-րդ գլուխ
[60] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մաս
[61] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 9-րդ մաս

(պետերին): Ինչպես նաև գրավոր կերպով տեղեկանալ զեկուցագրում ներկայացված հարցերի լուծման պատճառների վերաբերյալ և մերժումը բողոքարկելու վերաբերյալ[62]:

Զեկուցագրում պարտադիր պետք է նշել առաջարկվող կամ բողոքարկվող հարցի էությունը, այն հրամանատարի (պետի) կամ այլ զինծառայողի տվյալները, որոնց գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են, ինչպես նաև զեկուցագիր ներկայացնող զինծառայողի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, զինվորական կոչումը, բնակության (ուսման) վայրը:

Սակայն՝

Իրավունք չունեք զեկուցագիր ներկայացնելու մարտական հերթապահության մեջ, շարքում, պահակախմբում, օրվա վերակարգում կամ ուսումնական պարապմունքներում գտնվելու ժամանակ, բացառությամբ այն դեպքերի, երբ զինծառայողին տրվում է նպատկային հարց:

Եթե հրամանատարի (պետի) իրավասությունների մեջ չի մտնում զեկուցագրում նշված հարցերի լուծումը, ապա նա 3-օրյա ժամկետում զեկուցագիրն ուղարկում է վերադաս կամ դրանք լուծելու իրավասություն ունեցող հրամանատարին (պետին)՝ այդ մասին տեղյակ պահելով զեկուցողին: Զեկուցագիրը չի կարող ուղարկվել այն հրամանատարի (պետի) քննարկմանն ու կարծիքին, որի գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են զեկուցագրում:

Զեկուցագրի մասին որոշումներն ընդունվում են անհապաղ, բայց ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող զեկուցագրի մասին որոշումն ընդունվում է մինչև 30 օր

[62] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 47-րդ հոդված

ժամկետում՝ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության մասին տեղեկացնելով զեկուցագիր ներկայացնողին:

4. Տեղեկատվություն սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների համար

Եթե Դուք 1992 թվականի աշնանային զորակոչից մինչև 2015 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածը օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված (զորակոչից խուսափած) ու 27 (պահեստազորի սպաները՝ 35) տարին լրացած անձ եք,

կամ

Ձեր 27 (35) տարին չի լրացել, սակայն այս պահին ձեռք եք բերել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքեր

ապա՝

Դուք՝ յուրաքանչյուր չզորակոչված (խուսափած) զորակոչի դիմաց կարող եք կատարել վճարներ՝ սկսած պարտադիր զինվորական ծառայության զորակոչին օրենքի խախտմամբ չներկայանալու պահից:

Համապատասխան դիմումը ներկայացվում է այն զինվորական կոմիսարիատ, որտեղ Դուք հաշվառված եք, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում դիմումը կարող եք ներկայացնել օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական ծառայության կամ հյուպատոսական հիմնարկ: Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման իրավունք ստանալու հիմքերի առկայության դեպքում դրանք նույնպես անհրաժեշտ է կցել դիմումին:

Դիմումը քննարկվում է և պատասխանը տրվում է 1 ամսվա ընթացքում, իսկ լրացուցիչ ստուգումների և ուսումնասիրությունների անհրաժեշտության դեպքում՝ 2 ամսվա ընթացքում:

Դիմումի պատասխանը մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել դատական կարգով:

Դիմումի պատասխանն ստանալուց հետո, համապատասխան վճարը 10-օրյա ժամկետում անհրաժեշտ է կատարել բանկային համակարգի միջոցով:

Գումարը վճարելուց հետո Ձեր հանդեպ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվում է, մեկամսյա ժամկետում Ձեզ է տրամադրվում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, ինչպես նաև Զինվորական գրքույկը, Դուք հավառվում եք պահեստազորում[63]:

[63] «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենք

Վճարների դրույքաչափերը (յուրաքանչյուր չզորակոչված (խուսափած) զորակոչի դիմաց) հետևյալն են՝

1. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և 27 տարին լրացած զինապարտ քաղաքացիները	100.000 ՀՀ դրամ[64]
2. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից **ազատվելու հիմքեր ձեռք բերած** զինապարտ այն քաղաքացին՝	
1) ով հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով ճանաչվել է զինծառայության համար **ոչ պիտանի**՝ հանվելով զինվորական հաշվառումից	30.000 ՀՀ դրամ
2) ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) մահացել (զոհվել) է ՀՀ պաշտպանության ժամանակ կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է՝ անկախ 27 տարին լրանալու հանգամանքից	0
3) ով ունի գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) և զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ	50.000 ՀՀ դրամ
3. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից **ուսումը շարունակելու համար տարկետում ստացած** զինապարտ քաղաքացիները	50.000 ՀՀ դրամ
4. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում **ընտանեկան դրության բերմամբ տարկետման իրավունք ստանալու հիմք** ձեռք բերած այն քաղաքացիները, ովքեր ունեն	30.000 ՀՀ դրամ
1) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք ՀՀ քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ (անաշխատունակ ծնողներ են՝ - ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը, - առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը,	

[64] Որպես հաշվարկային հիմք ընդունվել է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափը:

- դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը) 2) առանց մոր մեծացող երեխա, 3) երկու երեխա, 4) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին, 5) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ, 6) երկրորդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամսյա հղիության շրջանում գտնվող կին, 7) օրենքով չնախատեսված դեպքերում ընտանեկան դրության բերմամբ տարկետում ստանալու իրավունք	
5. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում **3 ու ավելի երեխա կամ առանց մոր մեծացող 2 երեխա ունեցողները՝** անկախ 27 տարին լրանալու հանգամանքից	0
6. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից **առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունք ստանալու հիմք ձեռք** բերած զինապարտ քաղաքացիները	30.000 ՀՀ դրամ
Պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված (զորակոչից խուսափած) և 35 տարին լրացած **պահեստազորի սպաները**	200.000 ՀՀ դրամ
Պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված (զորակոչից խուսափած) և մինչև 35 տարին լրանալը «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից **ազատվելու կամ** պարտադիր զինվորական ծառայության զորակոչից **տարկետում ստանալու հիմքեր ձեռք բերած պահեստազորի սպաները՝**	100.000 ՀՀ դրամ

Հավելված Ա
Զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման մեխանիզմները

Կիրառելի օրենսդրություն

«Զինապարտության մասին» ՀՀ օրենք, ընդունված 1996 թ. սեպտեմբերի 16-ին /հետայսու՝ Օրենք/:

«Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի n 175-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 410 ՀՀ ՊՆ հրամանը, ընդունված 2013 թ. ապրիլի 8-ին (հետայսու՝ ՊՆ հրաման):

Հաշվի առնելով, որ ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները կարգավորվում են բացառապես օրենքով և ՀՀ ենթաօրենսդրական ակտերը պետք է համապատասխանեն ՀՀ օրենքներին, խնդիրների վերհանման ընթացքում հիմք է ընդունվել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքը: ՊՆ հրամանը դիտարկվել և ուսումնասիրվել է օրենքին համապատասխանության տեսանկյունից և շրջանակներում:

Զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացմանը վերաբերելի են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ՝ Զորակոչ, 1-ին՝ Ընդհանուր դրույթներ գլուխները:

Օրենսդրական կանոնակարգումները

Ըստ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան (բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի) արական սեռի զորակոչիկները և մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասին ա) կետի համաձայն՝ *Հանրապետական զորակոչային հանձնաժողովի* կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվառումից, կամ խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հաշվառվելով պահեստազորում, ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից: Ըստ 15-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հանրապետական զորակոչային հանձնաժողովը, նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասով նախատեսված դեպքերում *տարկետումներ տալու մասին* որոշումն ընդունում է ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Առողջական վիճակի պատճառով զորակոչիկները կարող են տարկետում ստանալ երկու դեպքում՝ 1. Առաջին դեպքում զորակոչիկը տարկետում է ստանում պարտադիր բուժման կարիք ունենալու դեպքում, 2. Երկրորդ դեպքում զորակոչիկը ճանաչվում է ժամանակավորապես ոչ պիտանի:

1. Բուժման համար տարկետում անձը կարող է ստանալ 3 անգամ, մինչև 1 տարի ժամկետով /Տես՝ Գծապատրկեր 1./: Երրորդ անգամ

տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը կրկին անցնում է բժշկական հետազոտում, որի արդյունքում կարող են կայացվել հետևյալ որոշումներից մեկը՝

a.ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության

b. ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստազորում

c.ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից:



Գծապատկեր 1. Պարտադիր բուժման կարիք ունենալու նպատակով տարկետում ստանալու ընթացակարգը

2. Ժամանակավորապես ոչ պիտանի զորակոչիկներին զորակոչից տարկետում տրվում է 1 անգամ՝ 3 տարի ժամանակով /Տես՝ Գծապատրկեր 2./: Տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը

կրկին անցնում է բժշկական քննություն, որի արդյունքում կայացվում է հետևյալ որոշումներից մեկը՝

a.ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության

b. ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստազորում

c.ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից



Գծապատկեր 2. Ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելու դեպքում տարկետում ստանալու

Զորակոչիկները հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս.

- կամ հաշվառվում են պահեստազորում
- կամ ճանաչվում են խաղաղ կամ պատերազմական պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի՝ հանվելով զինհաշվառումից: (ՊՆ հրամանի43-րդ կետ)

Պատերազմական ժամանակ զորակոչիկներին և զինապարտներին զորակոչից տարկետում տրվում է մինչև 2 ամիս: Բժշկական ցուցումներով այն կարող է երկարացվել ևս 4 ամսով: Տարկետման ավարտից հետո զորակոչիկները և զինապարտները ենթարկվում են բժշկական փորձաքննության՝ զինվորական ծառայության համար նրանց պիտանիությունը որոշելու համար: (ՊՆ հրամանի 44-րդ կետ)

Պահեստազորում հաշվառված քաղաքացիները՝

Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունենալու հիմքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված զորակոչիկներին զորակոչից տարկետում ստացած քաղաքացիները ենթակա են բժշկական վերափորձաքննության՝ 5 տարին մեկ անգամ: Եթե մինչև 27 տարեկան լրանալը քաղաքացին բժշկական վերափորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար ճանաչվում է պիտանի, ապա նա ենթակա են պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

Ներգրավված մարմինները և նրանց գործառույթները

Ըստ Օրենքի 17-րդ և 18-րդ հոդվածների՝ զորակոչն անց կացնելու համար ստեղծվում են զորակոչային հանձնաժողովներ՝

1. Տեղական զորակոչային հանձնաժողովներ, որոնց կազմը հաստատում է մարզպետը (Երևանի քաղաքապետը)՝ համապատասխան զինվորական կոմիսարի ներկայացմամբ: Հանձնաժողովի նախագահ է համարվում զինվորական կոմիսարը:

2. Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ, որոնց կազմում է ՀՀ կառավարությունը: Հանձնաժողովի նախագահ է համարվում համապատասխան մարզպետը (Երևանի քաղաքապետը):

3. Հանրապետական զորակոչային հանձնաժողովը, ստեղծվում է ՀՀ Կառավարության կողմից:

Տեղական զորակոչային հանձնաժողովները՝

- կազմակերպում են զորակոչիկների բժշկական քննությունը
- կայացնում են նախնական եզրակացություն և կենտրոնական բժշկական հանձնաժողով են ներկայացնում զորակոչիկներին բժշկական քննության արդյունքներով տարկետում տալու և պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ փաստաթղթերը՝ եզրակացության համար

Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ

- համակարգում են տեղական զորակոչային հանձնաժողովների գործունեությունը

Հանրապետական զորակոչային հանձնաժողովը

- քննարկում է տեղական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ գանգատները

• որոշում է ընդունում առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, բուժման կամ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության կապակցությամբ տարկետում տալու մասին

Տեղական և մարզային զորակոչային հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել Հանրապետական զորակոչային հանձնաժողով, իսկ Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

Զորակոչիկների Բժշկական փորձաքննության իրականացման կարգը և իրականացնող մարմինները սահմանված են ՊՆ հրամանով: Հրամանի 2-րդ գլխով մասնավորապես սահմանված է Ռազմաբժշկական և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները: ՊՆ հրամանի 2-րդ գլուխը վերնագրված է «Ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և նրանց գործառույթները», իսկ 2-րդ կետը՝ Ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները, կետը պարունակում է ենթակետ՝ «Բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները»:

Ըստ ՊՆ հրամանի բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են՝

- Կենտրոնական բժշկական հանձնաժողովը
- Զինկոմիսարատներին կից բժշկական հանձնաժողովները;

ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են՝

- ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը,
- Հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողովը,

- Հոսպիտալային ռազմաբժշկաօդաչուական հանձնաժողովը,
- Կենտրոնական պոլիկլինիկայի ռազմաբժշկական հանձնաժողովը,
- ՌՈՒՀ-երի ընդունելության ռազմաբժշկական հանձնաժողովը,

Ըստ հրամանի 4-րդ հավելվածի (Հիվանդությունների փորձաքննության ենթակա անձանց և փորձաքննություն իրականացնող մարմինների Ցանկ) 2-րդ տողի՝ զորակոչվելիս՝ զորակոչիկների փորձաքննությունը իրականցվում է ԶԲԿ-ի և ՀԿԲՀ-ի կողմից: Հրամանի՝ Հապավումներ մասում նշված է, որ ԿԲՀ-ն է Կենտրոնական բժշկական հանձնաժողովը, այսինքն ՀԿԲՀ-ն՝ Հանրապետական կենտրոնական բժշկական հանձնաժողովը, ԶԲԿ հապավման բացատրությունը որևէ տեղ սահմանված չէ:

Միևնույն ժամանակ Հրամանի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված են Կենտրոնական բժշկական հանձնաժողովի և Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների գործառույթները: Կարելի է հետևություն անել, որ ԶԲԿ-ն հանդիսանում է Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովները:

Որպես զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման վերաբերելի ԿԲՀ-ի գործառույթներ կարելի է առանձնացնել՝

1) բժշկական փորձաքննության ենթարկել զինկոմիսարիատներում նախնական բժշկական հետազոտում և փորձաքննություն անցած զորակոչիկներին,

2) նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական փորձաքննության աշխատանքներում գործնական և մեթոդական օգնություն ցուցաբերել զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին,

3) նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց հետազոտման և բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համագործակցել առողջապահական մարմինների հետ,

4) զորակոչիկների առողջական վիճակի մասին գրավոր եզրակացություն ներկայացնել, եթե նրանք.

ա. պիտանի են ճանաչվել զինվորական ծառայությանը (կամ պիտանի զինվորական ծառայության՝ սահմանափակումով),

բ. տարկետում են ստացել առողջական վիճակի պատճառով՝ բուժման նպատակով,

գ. ժամանակավորապես ոչ պիտանի են ճանաչվել առողջական վիճակի պատճառով՝ պարտադիր զինվորական ծառայության համար,

դ. ոչ պիտանի են խաղաղ ժամանակ զինծառայության համար,

ե. ոչ պիտանի են ճանաչվել զինծառայության համար՝ հանելով զինվորական հաշվառումից,

5) վերահսկել զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների գործունեությունը:

ԿԲՀ-ն անհրաժեշտության դեպքում կարող է վերանայել նախկինում ընդունած իր որոշումները:

ԿԲՀ-ի եզրակացությունները՝ զորակոչից հետո 20-օրյա ժամկետում ներկայացվում են ՀՀ զորակոչային հանձնաժողովի հաստատմանը:

Որպես զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման վերաբերելի Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների լիազորություններ կարելի է առանձնացնել՝

1) զինապարտներին փորձաքննության ենթարկել կցագրման, զորակոչի, վարժական հավաքների, ինչպես նաև զինված ուժերի համար

մասնագետների պատրաստության և ՌՈՒՀ-երի թեկնածուների ընտրության ժամանակ,

2) փորձաքննության ենթարկել պահեստազորում հաշվառված զինապարտներին,

3) ներկայացնել եզրակացություն՝ զինվորական ծառայությանը զինապարտների պիտանիության (նաև՝ սահմանափակումով) մասին,

4) անհրաժեշտության դեպքում զինապարտներին ուղարկել ստացիոնար հետազոտման,

5) զորակոչիկների զինվորական ծառայությանը ոչ պիտանիության մասին եզրակացություն ներկայացնել ԿԲՀ,

6) ամփոփել փորձաքննության արդյունքները և այդ մասին զեկուցել ըստ վերադասության:

ԿԲՀ-ն կազմավորվում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված անհատական կազմով, որպես կանոն հանձնաժողովի նախագահ է նշանակվում ՀՀ զինվորական կոմիսարը (Գլուխ 2, կետ 25): Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովները կազմավորվում են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն (Գլուխ 2, կետ 28): «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի զորակոչիկների բժշկական քննությունը կազմակերպում են տեղական զորակոչային հանձնաժողովները (Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության 2-րդ կետ):

Զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման հետ կապված որոշակի գործառույթներ են վերապահված նաև ռազմաբժշկական հանձնաժողովներին.

Կենտրոնական բազմաբժշկական հանձնաժողով

• մշակել զինծառայողների և զինապարտների՝ զորամասերի միջև ըստ առողջական վիճակի նպատակահարմար բաշխման բժշկական ցուցումներ

Հոսպիտալային բազմաբժշկական հանձնաժողով

• առանձին դեպքերում կարծիք ներկայացնել զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ,

• անհրաժեշտության դեպքում հայտնել կարծիք զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ

Հարկ է նաև նշել, որ ՊՆ հրամանի 37-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ բժիշկները դժվարանում են վերջնականորեն որոշել զորակոչիկի առողջական վիճակը, զորակոչային հանձնաժողովը նրան հետազոտման է ուղարկում քաղաքացիական բուժհիմնարկ: Ուղեգրում նշվում է նրա նախնական ախտորոշումը և հատկապես՝ ինչ պետք է ճշտել հետազոտության ժամանակ: Ուղեգրին կցվում է առողջական վիճակի հետազոտման ակտը:

Բուժհիմնարկում հետազոտությունից հետո լրացվում է զորակոչիկի առողջական վիճակի հետազոտման ակտը: Այն ստորագրում է տվյալ բուժհիմնարկում ՀՀ ԱՆ հրամանով կազմած փորձաքննական հանձնաժողովը և հաստատվում բուժհիմնարկի կնիքով: Ակտը ներկայացվում է զինկոմիսարիատ, որի հիման վրա տրվում է եզրակացություն՝ զորակոչիկի պիտանիության մասին:

Ըստ 40-րդ կետի՝ Առանձին դեպքերում ախտորոշումը ճշտելու նպատակով ԿԲՀ-ն կարող է զորակոչիկին հսկողական հետազոտման ուղարկել զինվորական բուժհիմնարկ: Հետազոտությունից հետո

կազմվում է առողջական վիճակի հետազոտման ակտ: Այն հաստատվում է բուժհիմնարկի կնիքով և ուղարկվում է ԿԲՀ-ի որոշմանը:

Զորակոչից տարկետում ստացած և բուժման կարիք ունեցող զորակոչիկին ԿԲՀ բժիշկ-մասնագետի եզրակացությամբ զինկոմիսարիատն ուղեգրում է համապատասխան բուժհիմնարկ՝ համապատասխան բուժում ստանալու համար, իսկ դինամիկ հսկողության անհրաժեշտություն ունեցողներին՝ տեղամասային պոլիկլինիկա: Զորակոչիկի բուժման ընթացքի նկատմամբ հսկողություն է իրականացնում նաև Զինվորական կոմիսարը:

Զորակոչվելուց անմիջապես առաջ Զինվորական ծառայության համար պիտանի ճանաչված զորակոչիկներին զննում են նաև զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովները:

Հավելված Բ
Դիմումների օրինակելի ձևեր

այլընտրանքային զինվորական ծառայության անցնելու վերաբերյալ

_____ տարածքային զինվորական կոմիսար

_____ին

Դիմող՝ _____ _____ _____ -ից
անուն ազգանուն հայրանուն

Բնակվող՝ _____
նշել Ձեր բնակության վայրի հասցեն

Դիմում

Հարգելի պարոն _____,

Ես՝ _____ _____ _____, ծնված _____, ՀՀ, ք. _____
անուն ազգանուն հայրանուն ամիս/ամսաթիվ ծննդավայր

հաշվառված եմ _____, հանդիսանում եմ ՀՀ քաղաքացի:
հաշվառման հասցե

Դավանում եմ _____ կրոնը, կամ ունեմ _____
նշել կրոնի, դավանանքի անվանումը նշել համոզմունքի անվանումը

համոզմունքները:

Իմ կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հատուկ հիմնական արժեքներն են _____
նշել դավանանքին կամ համոզմունքներին բնորոշ հատկանիշները, առանձնակի շեշտադրելով այն հատկանիշները,

_____
որոնք վկայում են այն մասին, որ զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը հակասում է Ձեր դավանանքին կամ համոզմունքներին

_____

_____

_____ թվականից հանդիսանում եմ _____ կրոնական
ամիս ամսաթիվ կրոնական կազմակերպության անվանումը

կազմակերպության անդամ /եթե հանդիսանում եք/:

Այսպիսով իմ կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը /նշել թե ինչն է հակասում/:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 26 հոդվածի և առաջնորդվելով «Այլընտարնքային ծառայության մասին» ՀՀ դրույթներով խնդրում եմ ինձ ուղարկել այլընտրանքայի զինվորական ծառայության:

Դիմող՝ _____
ստորագրություն անուն ազգանուն

_____
ներկայացման ամիս/ ամսաթիվ

_____ տարածքային զինվորական կոմիսար

_____ին

Դիմող՝ _____ _____ _____ -ից
անուն ազգանուն հայրանուն

Բնակվող՝ _____
նշել Ձեր բնակության վայրի հասցեն

Դիմում

Հարգելի պարոն _____,

Ես՝ _____ _____ _____, ծնված _____, ՀՀ, ք. _____
անուն ազգանուն հայրանուն ամիս/ամսաթիվ ծննդավայր

հաշվառված եմ _____, հանդիսանում եմ ՀՀ քաղաքացի:
հաշվառման հասցե

Դավանում եմ _____ կրոնը, կամ ունեմ _____
նշել կրոնի, դավանանքի անվանումը նշել համոզմունքի անվանումը

համոզմունքները:

Իմ կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հատուկ հիմնական արժեքներն են _____
նշել դավանանքին կամ համոզմունքներին բնորոշ հատկանիշները, առանձնակի շեշտադրելով այն հատկանիշները,

_____
որոնք վկայում են այն մասին, որ զինվորական ծառայություն անցնելը ընդհանրապես հակասում է Ձեր դավանանքին կամ համոզմունքներին

_____

_____

_____թվականից հանդիսանում եմ _____ կրոնական
ամիս ամսաթիվ կրոնական կազմակերպության անվանումը

կազմակերպության անդամ /եթե հանդիսանում եք/:

Այսպիսով իմ կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայության անցնելը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 26 հոդվածի և առաջնորդվելով «Այլընտարնքային ծառայության մասին» ՀՀ դրույթներով խնդրում եմ ինձ ուղարկել այլընտրանքայի աշխատանքային ծառայության:

Դիմող՝ _____
ստորագրություն անուն ազգանուն

_____
ներկայացման ամիս/ ամսաթիվ

Ուշադրություն՝

Այլընտրանքային ծառայության անցնելու վերաբերյալ դիմումը անհրաժեշտ է ներկայացնել այն **տարածքային զինվորական կոմիսարիատ**, որտեղ Դուք **հաշվառված եք**: Դիմումը պետք է ներկայացնել 2 օրինակից, որից մեկի վրա դիմումը ընդունող զինվորական կոմիսարիատի ծառայողի կողմից նշում կկատարվի այն ստանալու մասին և այդ օրինակը կպահվի Ձեր մոտ:

Դիմումի ներկայցման ժամկետները՝

Դիմումը պետք է ներկայացնել մինչև հերթական զորակոչին նախորդող **մայիսի 1-ը** կամ **հոկտեմբերի 1-ը**: Եթե դիմումը ներկայացվել է այս ժամկետի խախտմամբ և ժամկետը բաց է թողնվել Ձեր /դիմումատուից անկախ պատճառներով/ ապա անհրաժեշտ է նշել նաև այդ պատճառները: Այս դեպքում Տարածքային զինվորական կոմիսարիատը դիմումը ներկայացնելու ժամկետը բաց թողնելը կարող է համարել հարգելի:

Ժամկետների խախտմամբ ներկայացված դիմումը գրանցելու պահից 5 օրվա ընթացքում վերադարձնում է դիմումատուին:

Եթե դիմումի մեջ **չեն նշվե**լ ներկայացնելու ամիս, ամսաթիվը, տարեթիվը, դիմումատուի անունը, ազգանունը, հայրանունը, ստորագրությունը, բնակության վայրի հասցեն, նախընտրած այլընտրանքային ծառայության տեսակը, պարտադիր զինվորական ծառայության չանցնելու հիմնավրումները, ապա այն **5 օրվա ընթացքում** վերադարձվում է դիմումատուին՝ նշելով դիմումում թույլ տրված բոլոր ձևական սխալները: Դիմումը վերադարձվելուց հետո՝ **երկշաբաթյա ժամկետում**, դիմումատուն իրավունք ունի վերացնելու դիմումում թույլ տրված բոլոր ձևական սխալները և այն կրկին ներկայացնելու տարածքային զինվորական կոմիսարիատ: Սահմանված ժամկետում դիմումը կրկին չներկայացնելու դեպքում դուք ենթական եք պարտադիր զինվորական ծառայության զորակոչի:

Եթե առկա են պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքեր, ապա Տարածքային զինվորական կոմիսարիատը 30-օրյա ընթացքում վերադարձնում է դիմումը Ձեզ: Եթե նման պայմաններ առկա չեն, ապա դիմումը և Ձեր անձնական գործը ուղարկվում է Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողով: Հետագայում Ձեր դիմումը քննարկվում է Հանրապետական

հանձնաժողովի նիստին, որի ժամանակի և վայրի մասին Դուք նախապես պետք է տեղեկացվեք: Դուք **իրավունք ունեք** մասնակցել Հանրապետական հանձնաժողովի նիստին, իսկ Հանրապետական հանձնաժողովի պահանջի դեպքում Ձեր ներկայությունը կարող է պարտադիր համարվել:

Հանրապետական հանձնաժողովի կազմը՝ Տարածքային կառավարման նախարարության, Առողջապահության նախարարության, Աշխատանքի և սոցիալական նախարարության, Կրթության և գիտության նախարարության, Պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներ:

Ձեր դիմումի վերաբերյալ Հանրապետական հանձնաժողովի կողմից որոշում է կայացվում նիստին ներկա անդամների ձայների 2/3-ով, եթե հանձնաժողովի նիստին ներկա է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումն ընդունման պահից 10 օրվա ընթացքում ուղարկվում է Ձեզ /դիմումատուին/ և համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատ:

Հանրապետական հանձնաժողովը դիմումը քննարկում է և որոշում է կայացնում 1 ամսվա ընթացքում:

Ձեր դիմումը կարող է մերժվել եթե՝

1) դիմում ներկայացրած քաղաքացին երկրորդ անգամ կանչվում է Հանրապետական Հաձնաժողովի նիստին և անհարգելի պատճառով չի ներկայանում.

2) դիմումատուն ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ.

3) դիմումն ակնհայտ անհիմն է:

Դիմումը մերժելու դեպքում դուք ենթական եք պարտադիր զինվորական ծառայության զորակոչի:

_____ տարածքային զինվորական կոմիսար

_____ին

Դիմող՝ _____ _____ _____ -ից
անուն ազգանուն հայրանուն

Բնակվող՝_____
նշել Ձեր բնակության վայրի հասցեն

Դիմում

Հարգելի պարոն _____,

Ես՝ _____ _____ _____, ծնված _____, ՀՀ, ք. _____
անուն ազգանուն հայրանուն ամիս, ամսաթիվ ծննդավայր

հաշվառված եմ _____, հանդիսանում եմ ՀՀ քաղաքացի:
հաշվառման հասցե

_____անցել եմ բժշկական փորձաքննություն:
ամիս, ամսաթիվ

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել իմ առողջական վիճակի հետազոտման ակտի/ ակտերի, Զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի որոշման պատճենները:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Դիմող՝ _____
ստորագրություն անուն ազգանուն

_____
ներկայացման ամիս/ ամսաթիվ

Հանրապետական զորակոչային
հանձնաժողովի նախագահ
Ս. Օհանյանին

Դիմող՝ _____ _____ _____ -ից
անուն ազգանուն հայրանուն
Բնակվող՝ _____
նշել Ձեր բնակության վայրի հասցեն

Դիմում

Հարգելի պարոն Օհանյան,

Ես՝ _____ _____ _____, ծնված _____, ՀՀ, ք. _____
անուն ազգանուն հայրանուն ամիս, ամսաթիվ ծննդավայր

հաշվառված եմ _____, հանդիսանում եմ ՀՀ քաղաքացի:
հաշվառման հասցե

_____անցել եմ բժշկական փորձաքննություն:
ամիս, ամսաթիվ

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել իմ առողջական վիճակի հետազոտման բոլոր ակտի/ ակտերի, ներառյալ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության, Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշման պատճենները:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Դիմող՝ _____
ստորագրություն անուն ազգանուն

_____
ներկայացման ամիս/ ամսաթիվ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը

ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

Ինչով ենք մենք զբաղվում

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գործում է հետևյալ ոլորտներում՝ մարդու իրավունքների պաշտպանություն, շահերի պաշտպանություն և քաղաքացիական նախաձեռնություններ, խաղաղասիրություն: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը քննարկումների, սեմինարների, հանրային լսումների, (համատեղ) ակցիաների, դասընթացների, իրավական ակցիաների, քաղաքացիական մասնակցության, հրապարակումների, ուսումնասիրությունների/հետազոտությունների, մոնիթորինգի, լոբբինգի, ԶԼՄ-ների ներգրավման, հեռուստատեսային և ռադիո քննարկումների ու բանավեճերի միջոցով իրականացնում է իր գործունեության ոլոտները:

Ինչու դիմել մեզ

Եթե խախտվել են Ձեր իրավունքներն ու ազատությունները պետական մարմինների կողմից, և Դուք իրավական խորհրդատվության կարիք ունեք, որը տրամադրվում է **անվճար:**

Ինչպես գտնել մեզ

Դուք կարող եք այցելել մեր գրասենյակ, զանգահարել, կապ հաստատել էլեկտրոնային նամակագրությամբ, մեր փոստային հասցեին ուղարկել նամակներ անձամբ կամ Ձեր բարեկամների միջոցով՝ մեզ տեղեկացնելով իրավական խնդիրների վերաբերյալ:

Մեր հասցեն Վանաձորում՝

ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր 2001, Տիգրան Մեծի 59
հեռ՝ +374 /322/ 4 22 68
բջջ. 094 042268
անվճար թեժ գիծ՝ 0 8000 12 11
կայքէջ՝ www.hcav.am
էլ. հասցե՝ hcav@hcav.am

Մեր հասցեն Երևանում՝

ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 3 շենք, բն. 21

Նշումների համար

HELSINKI CITIZENS ASSEMBLY
ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
08000 12 11
Խախտվե՞լ են Ձեր իրավունքները,
զանգահարե՛ք թեժ հեռախոսագծով